ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

N ՀՀ ՆԳՆ ՀՄԱՊՁԲ-2024/Հ-41
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան **<<18>>. <<12>>. 2024թ.**

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի, որը գործում է ՀՀ ՆԳՆ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ԱՎԱՆՏԳԱՐԴ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս.Ավետիսյանի (այսուհետ՝ Վաճառող), հիմք ընդունելով 25.09.2024թ-ին կնքված ՀՀ ՆԳՆ ՀՄԱՊՁԲ-2024/Հ-41 ծածկագրով գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 8.5 և 8.6 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան, գինը, վճարման կարգը և գործողության ժամկետը

1.1 Հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 05 դեկտեմբերի 2024 թվականի N 1900-Ա որոշումը, սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին ***ՀՀ ՆԳՆ ՀՄԱՊՁԲ-2024/Հ-41*** ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում ապրանքների մատակարարման ժամկետները երկարաձգել մինչև 2025 թվականի հունվարի 30-ը:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքի կատարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (1) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ներքին գործերի նախարարությունը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

«ԳՆՈՐԴ»	«ՎԱՃԱՌՈՂ»
ՀՀ ներքին գործերի նախարարություն	**«ԱՎԱՆՏԳԱՐԴ» ՍՊԸ**
ք. Երևան, Նալբանդյան 130	**ք Երևան, Գայի պողոտա 14/3**
ՀՀ Ֆինանսների նախարարության	**«Արարատբանկ» ԲԲԸ**
գործառնական վարչություն	**Հ/Հ 1510002448988985**
Հ/Հ 900011047488	**ՀՎՀՀ 01060547**
ՀՎՀՀ 02882913	**Հեռ: 060-90-60-40**
հեռ. 010 59-66-32	**Էլ. Փոստ: info@avantgarde.am**
էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am	
Ա. Ֆիդանյան	**Ս. Ավետիսյան**
/ ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար/	**/տնօրեն/**
(ստորագրություն)	**(ստորագրություն)**
Կ.Տ	**Կ.Տ**